ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 դեկտեմբերի 2023 թվականի N 2277-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9-Ի N 1158-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 9-ի «Դատախազների համազգեստի, տարբերանշանների նկարագիրը, դատախազության խորհրդանիշի նկարագիրը և համազգեստի տրամադրման ժամկետները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 441-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1158-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) N 1 հավելվածի 4-րդ կետում կատարել հետևյալ լրացումները՝

1) 3.2-րդ ենթակետը «և շղթայով» բառերից հետո լրացնել «կամ» բառով.

2) լրացնել նոր՝ հետևյալ բովանդակությամբ 3.3-րդ ենթակետով՝

«3.3) տաբատ՝ մուգ կապույտ գույնի կտորից, ուրվագիծը՝ ուղիղ, առանց ծալքերի, 2,5 մմ լայնությամբ կարմիր եզրակարով, գոտին գոտեմակողերով, կոճկվում է երկու կոճակով և շղթայով, արտաքին գրպանները թեք են (ձև N 7, նկար 5), բարձրագույն դասային աստիճան ունեցող ինքնավար պաշտոն զբաղեցնող

անձանց համար՝ եզրակարից 0,5 սմ հեռավորությամբ ձգվում է կարմիր վրակարվածք՝ 2,2 սմ լայնությամբ շերտով, տաբատի կողքի կարի ամբողջ երկայնքով (ձև N 7, նկար 6).».

3) լրացնել նոր՝ հետևյալ բովանդակությամբ 5.1-ին ենթակետով՝

«5.1) տաբատ՝ կառուցվածքով և ձևով համապատասխանում է սույն հավելվածի 4-րդ կետի 3.3-րդ ենթակետով սահմանված նկարագրին.»:

2. Որոշման N 1 հավելվածի N 7 ձևը լրացնել նոր՝ նկար 5-ով և նկար 6-ով՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

25.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ